



Չարսարանի ԶՐՈՒՅՆԱԿԻՑ

N #142

Հակահայկական քարոզչության թուրքական քողարկված հանգստությունն ու ադրբեջանական ագրեսիվությունը



Երևանի պետական համալսարանի Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի վիրտուալ հայագիտության և տեղեկատվության բաժինը (ՎՀՏԲ) վերջերս ուսումնասիրել է ինտերնետային մի շարք կայքեր, որոնք հակահայկական գիտահանրամատչելի տեղեկատվություն պարունակող նյութերի քարոզչությամբ են զբաղվում: Խոսքը մասնավորապես Հայկական հարցի պատմական-քաղաքական-իրավական կողմերի արծարծման մասին է: Թեմայի շուրջ գրուցում ենք ՎՀՏԲ վարիչ,

պատմական գիտությունների թեկնածու Միեր ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ հետ:

— Համացանցում հակահայկական տեղեկատվություն տարածող ի՞նչ կայքեր եք ուսումնասիրել, և թուրքական քարոզչությունն ինչո՞վ է տարբերվում ադրբեջանականից:

— Մեր բաժինն իր գործունեության այս կարճ ժամանակահատվածում հասցրել է ուսումնասիրել հակահայկական տեղեկատվություն տարածող չորս տասնյակից ավելի

կայքեր: Դրանց մեծ մասը ադրբեջանական ծագում ունի, իսկ մնացածը՝ թուրքական է: Սրանք հիմնականում տարածում են գիտահանրամատչելի բնույթի հակահայկական բովանդակությամբ ապատեղեկատվություն, որն ավելի խորքային է ու վտանգավոր, քան լրատվականը: Դրանք ժամկետայնության խնդիր չունեն, քանի որ առնչվում են պատմական տարբեր ժամանակաշրջանների և միտված են լուծելու պատմության աղավաղման ավելի խորքային խնդիրներ: Նման կայքերը ոչ միայն գիտահանրամատչելի բնույթի հակահայկական կեղծ տեղեկատվություն են քարոզում, այլև զուգահեռաբար կեղծում են սեփական պատմության այն էջերը, որոնք առնչվում են իրենց ծագումնաբանությանը, բնիկությանը և նման հարցերի: Այս առումով հայագիտության՝ մասնավորապես հայոց պատմության մեջ բավականին խոսուն փաստարկներ կան, որոնք խոչընդոտում են մեր հարևանների՝ սեփական պատմությունն ու հայկական պատմամշակութային բազում հիմնախնդիրների իրական պատմությունը կեղծելու փորձերը: Եթե ադրբեջանական կողմը համացանցում հիմնականում ներկայանում է այնպիսի կայքերով, որոնցում լավագույն դեպքում առկա են հայագիտությունը որպես գիտական ուղղություն, առանձին «ներկայացվող» ենթաբաժիններ (ինչպես www.karabakh-doc.azerall.info կայքում), ապա թուրքական կողմն առնվազն մեկ դեպքում առաջ է անցել ու դաշտում հանդես է գալիս հայագիտությանն առնչվող մեկ ամբողջական կայքով՝ www.eraren.org: Դա Անկարայի Հայկական հետազոտության ինստիտուտի (Ermeni Ara_t1rmalar1 Enstitüsü- Institute for Armenian Research) կայքն է: Համաձայն իրենց հաղորդած տեղեկատվության՝ ինստիտուտն ստեղծվել է 2001-ին՝ Եվրասիական ռազմավարական հետազոտությունների կենտրոնի (Center for Eurasian Strategic Studies) շրջանակներում: Ինստիտուտի նպատակը, ինչպես իրենք են ներկայացնում, հայագիտության զանազան բաղադրիչների՝ օրինակ Հայկական հարցի պատմական-քաղաքական-իրավական կողմերի, ինչպես նաև սփյուռքի և դարաբաղյան հիմնախնդրի ուսումնասիրությունն է: Կայքն ուսումնասիրելիս մի պահ կարող է թվալ, թե թուրքական այս ինստիտուտում հայագիտության զարգացման համար արժեքավոր աշխատանք է իրականացվում. համատեղ հետազոտություններ իրականացնելու համար հրավիրվում են օտարազգի «հայագետներ», գումարվում են միջազգային գիտաժողովներ, հրատարակվում են հիմնականում անգլալեզու և թուրքալեզու ուսումնասիրություններ, հոդվածներ, լույս են ընծայվում հնչեղ վերնագրերով երկու ամսագրեր՝ Review of Armenian Studies և Armenian Studies: Այնինչ բավական է թեկուզ մասնակի ծանոթանալ կայքում ներկայացված «հայագիտական նյութերի» բովանդակությանը, որպեսզի պարզ

դառնա ինստիտուտի գործունեության իրական նպատակը: Այն է՝ հայագիտության հնարավորինս աղավաղումը եթե ոչ հայկական կողմի, ապա գոնե երրորդ կողմ համարվող օտարազգի, տվյալ հիմնախնդիրներով քիչ թե շատ հետաքրքրվող ներկայացուցիչների համար: Նշենք նաև այն, որ թուրքական կողմը, ի տարբերություն ադրբեջանականի, ոչ թե փորձում է պատմական որոշակի իրադարձության վերաբերյալ տեղեկատվությունն ընդհանուր առմամբ կեղծել, այլ պահպանելով տեղեկատվության ոչ հիմնարար, բայց մեծամասնություն կազմող հատվածի ճշգրտությունը՝ կեղծում է կարևոր մասի հիմնարար տվյալները՝ դրանով իսկ աղավաղելով նյութը: Նրանք այս ամենն անում են պրոֆեսիոնալ PR-ի ձևով. հրապարակած նյութերում կոշտ հերքումներով հանդես չեն գալիս, այլ թվացյալ քննարկումներ են ծավալում և դրանք տանում իրենց ձեռնտու ուղղությամբ: Վերջում էլ այս կամ այն ամբիոնից հայտարարում են, թե գիտական հիմնարար աշխատանքներ են տանում և ունեն անհերքելի փաստարկներ ու այն ընդունող չեզոք լսարան: Կարծում են՝ մենք պետք է նախահարձակ լինենք, համացանցում մեր նյութերը ներկայացնենք տարբեր լեզուներով:

Վերջերս ձեռքս էր ընկել Ֆրանսիայից բերված թուրքական տուրիստական բրոշյուր-քարտեզ, որտեղ ներկայացված բազմաթիվ տեղեկությունների կողքին կար թուրքիայի տարածքում մարդկության պատմության ողջ ընթացքում ապրած և պատմություն կերտած հայտնի ժողովուրդների ու պետական միավորների ցանկը, իսկ հայերի և Հայաստանի մասին խոսք չկար: Կարճ ասած՝ մեր հարևանների համապատասխան կառույցներն ու կազմակերպությունները տարբեր խողովակներով, տարբեր չափաբաժիններով փորձում են մեր պատմությունը կեղծել:

— Այդպես են վարվում նաև ադրբեջանցիները. ըստ նրանց՝ Հայաստանն Արևմտյան Ադրբեջանն է, նույնիսկ շատ կայքեր ունեն, որտեղ մեր տեսարժան վայրերը՝ Ջանգեզուր, Ջերմուկ և այլն վերագրված են իրենց: Այդ անհեթեթությունները կարելի է տեսնել օրինակ www.amor.az կայքում:

— Թուրքերը կարծես սովորել են, որ ագրեսիվությամբ Եվրոպային չեն կարող համոզել և շատ փափուկ, սահուն ձևերով են իրենց տեսակետը տարածում, մինչդեռ ադրբեջանցիներն առավել ագրեսիվ կեցվածք ունեն: Բերենք ևս մեկ օրինակ: www.armeniangenocidedebate.com կայքը կարծեք քննարկման է հրավիրում բոլոր այն կողմերին, որոնք շահագրգռված են հարցի արդարացի լուծմամբ: Սակայն այնտեղ

ներկայացված գրականության ցանկն ուշադիր նայելիս հանդիպում ենք հեղինակների անունների, որոնցից մի քանիսը ներկայացված են վերը նշված կայքում՝ իրենց հակահայկական նյութերով: Իսկ երբ հետազոտում ես «չեզոք» նյութերը, որոնք իբր պետք է ցույց տան ցեղասպանության իրական փաստերը, դրանք հիմնականում հարցը տանում են փակուղի: Ասում են, որ ոչ մի ցեղասպանություն չի եղել, որ թուրքերն ուղղակի Առաջին համաշխարհային պատերազմի ժանր պայմաններից ելնելով՝ արևելյան սահմաններում ապրող հայերին օգնելու համար նրանց տեղափոխել են ավելի անվտանգ վայրեր, այդ ժամանակ էլ եղել են որոշակի թվով մահացածներ: Կայքի մի մասում էլ հարցում են անցկացնում, թե արդյո՞ք ընթերցողը հավատում է, որ ցեղասպանություն է տեղի ունեցել, ինչն ինքնին խոսում է այն մասին, որ կասկածի տակ է առնվում հենց նույն ցեղասպանության փաստը: Կամ օրինակ՝ կայքի «Արխիվներ» (Archives) բաժնում էլ անդրադառնալով հայկական արխիվներին՝ նշվում է, որ դրանք տարիներ շարունակ փակ են, ինչը հեռու է իրականությունից:

— Ուսումնասիրությունների ժամանակ տարբերություն նկատո՞ւմ եք ցեղասպանության թեմայի այժմյան և մի քանի տարի առաջվա քննարկումների միջև, երբ թուրքերն այդ մասին չէին էլ խոսում:

— Մոտեցումների առումով ադրբեջանական կայքերում վերջին տարիներին տարբերություն չի նկատվում, իսկ ինչ վերաբերում է թուրքական կայքերին, այսպիսի ընդգծում անենք. առաջինը պետական քաղաքականության լծակով շարժվող կայքերն են, որոնք թուրքական պաշտոնական տեսակետի կրողն ու քարոզողն են: Երկրորդն անկախ թուրքական կայքերն են, որոնք փորձում են հարցն ավելի ճիշտ և ավելի մեղմ ներկայացնել (օրինակ՝ www.ermenisoykirim.net):

— Համացանցի՝ մեզ համար խնդրահարույց հարցերում ի՞նչ ընդհանուր պատկեր եք տեսնում: Ավելի շատ են հայամե՞տ, թե հակահայկական տեսակետները, ասենք, Հայոց ցեղասպանության կամ դարաբաղյան հակամարտության կարգավորման հարցերում:

— Այս երկու խնդիրները պետք է զանազանել, քանի որ համացանցում Հայոց ցեղասպանության ներկայացման պատկերն այլ է, դարաբաղյան հիմնախնդրինը՝ այլ: Հայոց ցեղասպանության հարցում 2010 թ. ապրիլի 23-ին 5 հիմնական որոնողական համակարգերում՝ www.google.com, www.bing.com, www.rambler.ru, www.yahoo.com,

www.yandex.ru, թուրքերեն, անգլերեն և ռուսերեն հարցում անելով Հայոց ցեղասպանություն բառերը և դիտարկելով արդյունքների 1-ին էջերը՝ 158 արդյունք գտանք, և միայն 20 կայքերն էին հակահայկական (մանրամասն տես՝ «Մ. Հովհաննիսյան, Հայոց ցեղասպանության ներկայացման խնդիրները համացանցում» հոդվածում — www.armin.am/education/id/181/lng/2): Մնացածները հայամետ էին: Բայց խնդիրը հակառակ պատկերն ունի, երբ նույն դիտարկումն անում ենք ղարաբաղյան հիմնախնդրի վերաբերյալ: Այստեղ արդեն ադրբեջանական կայքերն ավելի գերիշխող են:

— Ո՞րն է լուծումը:

— Պետք է ընդհանուր շղթա ձևավորենք, որպեսզի ավելի համակարգված աշխատենք: Շղթան պետք է ունենա մի օղակ, որը կառավարելով և հովանավորելով ընդհանուր գիծը՝ աշխատանքը հետևյալ սկզբունքով կազմակերպի. դիտարկման անցկացումը և խնդիրների հայտնաբերումը պետք է իրականացնեն համապատասխան օղակի ներկայացուցիչները, ապա հղում կատարվի համապատասխան մասնագետներին, իսկ վերջիններս էլ նույն օղակին ներկայացնեն նեղմասնագիտական աշխատանքները, ինչն էլ կապահովի համացանցում այդ ամենի տարածումը: Այստեղ կարևոր է նաև այդ նյութերը տարբեր լեզուներով թարգմանելու հարցը, որը շատ անգամ կբարձրացնի գործի արդյունավետությունը: Հետաքրքիր մի փաստ ևս. որոնողական համակարգերում Հայոց ցեղասպանության խնդիրները ներկայացնող առաջատար և հայամետ կայքերի ճնշող մեծամասնության հեղինակներն ու սպասարկողներն անհատներ են: Ողջունելով նման փաստը, այնուամենայնիվ, նշենք, որ խնդրի առավել արդյունավետ լուծման համար անհրաժեշտ է ավելի մեծացնել պետական մասնակցության չափաբաժինը: Նաև ցանկալի է, որ համապատասխան շղթայի համակարգման դաշտում ներառվի կայքերի հղում-անվանումների վերահսկումը, երբ համացանցի և am, և այլ տիրույթներում, օրինակ՝ armenian history, armenian genocide ու նման հղում-անվանումներով կայքերը համակարգվեն և սպասարկվեն ընդհանուր խողովակից՝ խառնաշփոթից խուսափելու համար: Շատ կարևոր է, որ հրատարակվող գրքերը կայքերում ազատ ընթերցման դրվեն: Ընդ որում դա պետք է պետական մակարդակով իրականացվի, պաշտոնական կայքերում ներկայացվի: Փորձում ենք մեր մասով՝ www.armin.am կայքով այս հարցը որոշ չափով լուծել: Կարևոր է նաև հղումների (լինկերի) մատուցումը: Զգիտես ինչու՞ մեզանում այդ մշակույթը շատ դեպքերում կամ

բացակայում է, կամ էլ բավականին թերի է: Դա քարոզչության այն ձևերից է, որը տեղեկատվությունն արագ հասանելի է դարձնում: Չէ՞ որ բոլորս ընդհանուր գործ ենք անում:

Հասնիկ ԲՈՒԴԱԴՅԱՆ

Աղբյուրը՝ «Հայաստանի զրուցակից» թերթ, N #142, 02.07.2010 -

<http://www.sobesednik.am/index.php/archive-am/2839--142/40386-2010-07-05-07-08-43>